

Գողանից տեսնդ են ունեցել	147
«Խորությ կոչուած բկացաւ	40
սովորական բկացաւ	26
աչքացաւ	12
արեան նուռագութիւն	9
որից այլ և այլ հիւանդութիւններ	42

Այս թուում 2 հոգի միայն լուրջ հիւանդ են եղել՝ թափերի ըորբորումով ըսունուած:

Առօղջական համեմատաբար այսպիսի բարուր դուռթիւնը, չնայած սաների աւելի բազմանալուն՝ կարելի է գուշէ մասամբ նաև հորանով բացարեկ, որ աշակերտաց ճաշի սկզբնը նոյեմբեր ամսից վեհափառ Հայրապետի ձեմարանի բակում կառուցած նոր սեղանատունը փախադրուեցաւ, և վարչութիւնն անմիջական հոկոզութիւն ունենալով կարող էր սննդեան բարելաւելուն նպաստել, որից շատ բան կախուած է:

Տնտես էր Ենորհ, Եսայի սարկաւագ:

Մախք եղել է ամբողջ 1899 թ.-ի ընթացքում 41,777 ր.

Իսկ 1900 թուականի համար նախահաջի էր կազմած 40,832 բուբլու, բայց այդ գումարը մի քանի խոշոր արտաքոյ կարգի և չնախատեսուած ծախքերի պատճառաւ չբաւականացաւ և հարկ եղաւ խնդրել պլիս 3000 ր.

Նախահաշիւը բաժանուած էր 5 մասերի ըստ պատրաստ:

ա) Ռւսումն. մաս, որի մէջ մոտնում են ըլլոր ուսուցչաց սոճիկները 14,900 ր.

բ) Վարչական մաս, որի մէջ մտել է կուսակրօն պաշտօնեաների թէ միաբանական սոճիկը և թէ ուսումն, պաշտօնավարութեան համար եղած յաւելումը (տեսչ՝ 700, երկու ուսուցիչ վարդապետաց խրախնիւթին 600, մի սարկաւագի 200—ընդամէնը 2100 ր.), վերակացուների, Բժշկի, մատենադարանապետի, քարտուղարի, ծառաների սոճիկը և դիւանական ծախք ընդամէնը 9040 ր.

շ) Ռւսումն. պիտոյք, դիրք, գասարաւական կարասիք ելն 1200 ր.

տ) Տնտես. մաս. թէյ և շաքար, հանդերձելիքն, վառելիք, նորոգութիւն և կարկատան ելն 12972 ր.


ե) Արտասահմանում և Ռուսաստանում բարձր. կրթութիւն ստացող նախկին սաների թուակ 2900 ր.

Նախահաշուի մէջ որոշուած գումարով ուսանում էին Մուշեղ սարկաւագ (այժմ հանգուցեալ), իբրև սրգեգիր Բար, Գ. Փրիւ գոնեանի,

Կոստանդին սարկաւագ (այժմ Կորիւեւում), իբրև որդեգիր Բարեյիշատակ Խուան գատեանի.

Տեալք Եղնիկ և Յուսիկ վարդապետաներ (այժմ ուսուցիչ և օգն. տեսչի ձեմարանում),

Այս հաշուից գուրս Բարեյիշ. Գ. Թուամյեանի կատակած գումարի տոկոսով ուսանում էին Մըրտո սարկաւագ (այժմ ուսանող Ս. Գետերբուրդի համալսարանի առհեկը բաժնի) և Պօլոս սարկաւագ՝ այժմ Խարկովում: Այլ և Բարեյիշատակ Յ. Աղամեանի կոտակից նպաստ ընդունելով ուսումնում էր կիեւում Բարեյնորհ Մամբրէ վարդապետ (այժմ տնտես և ուսուցիչ ձեմարանում):



ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ

Մարտի 8-ին, հինգշաբթի երեկոյեան 5 ժամին իւր մահկանացուն կնքեց Մայր Աթոռիս միաբան Մուշեղ Սեր Գարեգինեանց: Հանգուցեալը ծնուել է նուշի քաղաքում 1874 թ: Հօր կենդանութեան օրով նա կրթուում էր նոյն քաղաքի Բէալական դպրոցում: մահուանից 2 տարի յետոյ թողնում է Բէալական դպրոցը և պատրաստուում է ձեմարան մանել: Տ. Մակար կաթուղիկոսի օրով, 1889 թ. ընդունուում է Մայր Աթոռիս Փառանդապետաց Գեորգիան ձեմարանի դ. դասարանը և յաջող աւարտելով դպրոցական բաժինը՝ 1893 թ.

մանում է մասնագիտական բաժինը որտեղից աւարտում է 1896 թուին:

Բ. լսարան փոխադրուած ուսանող Մուշեղ Տէր Գարբեկեանը դիմում է ազգին վեհափառ Տ. Տ. Մկրտիչ կաթողիկոսին առանձին խնդրով որ իրեն ընդունեն կուսակրօն միարանութեան շարքը. նրա խնդիրը յարգուում է և 1894 թուից նա ճանաչուում է միարան Մայր աթոռի:

Յաջող աւարտելով մասնագիտական բաժինը ձեմարանի փարզութիւնը վեհափառի համար ուղարկում է նրան Կիելի համալսարանը իրաւաբանութիւն և նկեղեցական իրաւագիտութիւն ուսանելու՝ հանգուցեալ Դէրգ Փրիդոնեանի յիշատակին եղած կտակի արդինկով:

Հէնց ա. տարին 1897 թուին նա համալսարանում ընդունուում է ազգա ուսանող և նոյն թուականի վերջում առաջին կարգի վկայականով աւարտում է առաջին լսարանը միեւնոյն ժամանակամիջոցում պատրաստուում էր գիմնազիոնից հասունութեան վկայական ստանալու որ և յաջողուում է 1890 թուին դեկտեմբեր ամսի սկզբին. և այդ թուականից նա ճանաչուում է համալսարանում իրեւ ուսանող Բ. լսարանի:

1899 թուին արդէն հիւանդացած էր նեարդային թուլութեամբ. 1900 թուին փոխադրուում է. ո. Պետերութի համալսարանը, որանու առանց այն էլ նորա առողջութեան խանդարումը աւելի սաստկանալով կրծքի թուլութեան և թոքախափ է փոխուում:

Օգոստոսին նա դարձաւ Մայր աթոռ, թոքախան արդէն ընկճնէ էր նրան. մի քանի ամիս ևս անցաւ և նա հրաժարուեցաւ աշխարհից, ուղղի մէջ թողնելով իրեն բարեկամներին և ծանօթներին:

Մուշեղ սարկաւագը իւր թէ աշակերտական և թէ ուսումնական կեանքում օրինակի է եղել իր ընկերակիցների համար, նա ոգեսրաւել է իսկական դործով և առանց աղմուկ հանելու նպաստին է դիմիլ. Այն ակղեկութիւնները, որ տախիս է Կիելի համալսարանի յարդելի ուսուչապես ող. Եղիշաղարեանը Մուշեղ սարկաւագի մասին իրեն գովաստնական կատըներով, Կարճ ժամա-

նակում իւր աշխատասիրութեամբ, ընդունակութեամբ և համեստութեամբ նա կարողացել էր համալսարանի վարչութեան ուշադրութիւնը և ուսուցչապեաների սէրը գրաւել:

Կիւրակի մարտի 14-ին հանգուցեալի դիակը Մայր Տաճար իջեցրին. Նրա գագաղը զարդար ուած էր թարմ ծաղիկներով և պատկերով, որ արուած էին ձեմարանի ուսուցչական խմբի և աշակերտաների կողմից. վերջինս հիւսուած էր թարմ ծաղիկներից: Քառասուն նահատակ մանուկների առնի օրն էր արժ. Կարապետ վրդ. մի զամբանական խօսեց Մայր Տաճարումն ներկայացնելով հանգուցեալին զիստութեան աշխատասիրութեան և պարտաճանաչութեան նահատակ մանուկ: Կիակը միարանական գերեզմանատու առաջից գրաւելու արարան ձեմարանի գաւթով, առաջից գրաւելում էին ձեմարանի սաները, ապա երգեցիկ խումբը և պատկանակի իրեների ձեմարանի գաւթում ուրարակիը ուսանողներից մէկը մի զամբանուով արայայացեց այն ցան ու թախիծը, որ հանգուցեալը թողնում էր իւր ընկերների և մատաղ եղբայրների վրայ այսպէս շուտ հեռանալով, այդ միջոցին աշակերտաներից ումանք թարմ ծաղիկներով զարդարում էին հանգուցեալի զագաղը: Վերջին հրաժեշտը առեւեց նրա գերեզմանի մօտ հանգուցեալի ձեմարանաւարա, ընկերներից մէկը՝ և. Նորարևեանը: Տեսարանը սրտաշարժ էր, յուզարկաւորութեանը աւելի տիրութիւն էր տախիս արժ. Կոմիտաս վարդապետի առաջնորդութեամբ երգուած քառամյուն «Աշխարհ ամենայնը», որ շատերից արցունքի կաթիլներ խեց:

ՏԵՇԿԱՀԱՅՔ.

—Կլսենք թէ Աղդ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կազմեր է Յանձնաժողովը մը, որ պաշտօն պիտի ունենայ Հիւանդանոցի կալուածներուն սեփականութեան եղանակը ճշաելու և ըստ օրինի աւելի ապահով վիճակի մէջ դնելու համար միջոցներ խորհիլ և արդիւքը աեղեկազրել Հոգաբարձութեան Այդ Յանձնաժողովին անդամ կարգուած է նաև յարաբերական գիւանի տեսուչ Խաչատրութեան կարպետներ էֆ., որուն արդէն Վար-